Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.10.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան –Գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ - ԳՊ/ԳԱ,

Կ. Սիրունյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար ԳՊ/ԳԱ,

Մ. Միքայելյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ,

Հ. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ:

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 9-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

1.2

	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	«Հույս-Մոտոր» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00430814, հասցե՝ ք. Երևան, Զավարյան 12, էլ հասցե՝ tender@lavavto.am
2	«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 03012667, հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն 19/40, էլ հասցե՝ saturn90@mail.ru
3	«Տուրբոլայն» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 05205222, հասցե՝ ք. Երևան, Շիրազի 39/1, էլ հասցե՝ tender-turboline@mail.ru
4	«ՏԻԳՎԱԿՈ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00874609, հասցե՝ ք. Երևան, Դ. Մալյան փող. 22 շ., բն. էլ հասցե՝ tigvako@bk.ru
5	«ԴԱՐՖ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02609379, հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա 1/7, էլ հասցե՝ darf-llc@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ.

1	«Տուրբոլայն» ՍՊԸ	Ներկայացված բոլոր փաստաթղթերում, ներառյալ հայտի ապահովումը և գնային առաջարկը, տնօրենի և ստորագրողի տվյալները չեն համընկնում

Մյուս մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում են հավելված 1-ում.

Հանձնաժողովը որոշեց.

1. Հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն վերոգրյալ անհամապատասխանության վերաբերյալ (գրությունը կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

5. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պաշտոնական պարզաբանման տրամադրման հաջորդ օրը ժամը 10.30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Մ. Միքայելյան

_____ Կ. Սիրունյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող՝ _____ Մ. Սարգսյան

Հավելված 1

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)								
		«Հույս-Մոտոր» ՍՊԸ			«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ			«Տուրբոլայն» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	Կուտակիչ մարտկոց	124 792	24 958	149 750	137 500	27 500	165 000	125 000	-	125 000

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)					
		«ՏԻԳՎԱԿՈ» ՍՊԸ			«ԴԱՐՖ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	Կուտակիչ մարտկոց	180 000	-	180 000	104 167	20 833	125 000

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա

Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.10.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան –Գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ ,

Մ. Միքայելյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում է՝

Կ. Սիրունյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար,

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **Տեղեկություններ ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցման և հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ**

1. ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանման համաձայն «Տուրբոլայն» ՍՊԸ-ին պետք է հնարավորություն ընձեռնվի՝ լիազորագիր ներկայացնելու համար (գրությունը կցվում է):

Հանձնաժողովը որոշեց.

1. Ծանուցել «Տուրբոլայն» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան լիազորագիր:

2. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել սույն թվականիհոկտեմբերի 11-ին ժամը 09.30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Մ. Միքայելյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող ՝ _____ Մ. Սարգսյան

Արձանագրություն 4

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.10.2017թ. ժամը 09:30-ին:

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան –Գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի պետ - վարչության պետի տեղակալ ,

Մ. Միքայելյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Հ. Ղազարյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում է՝

Կ. Սիրունյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության սպասարկման բաժնի տնտեսվար,

Գնումները համակարգող

Մ. Սարգսյան՝ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի պետ

1. **<u>Հայտերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ</u>**

1. «Տուրբոլայն» ՍՊԸ-ին սահմանված ժամկետում ներկայացնել է համապատասխան լիազորագիրը:

Հանձնաժողովը որոշեց.

2. «Տուրբոլայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին:

4. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

5. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/8 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Մ. Միքայելյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող՝ _____ Մ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ խնդրում ենք տրամադրել մեթոդական օժանդակություն և ներկայացնել պարզաբանում ներքոգրյալ հարցի վերաբերյալ՝

Գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան մասնակիցը ներկայացրել է հայտ, որում առկա բոլոր փաստաթղթերում, ներառյալ հայտի ապահովման և գնային առաջարկի մեջ, տնօրենի և ստորագրողի տվյալները չեն համընկնում (առկա չէ նաև լիազորագիր):

Գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան վերոգրյալ փաստաթղթերը շտկման ենթակա չեն և անհամապատասխանությունների դեպքում հայտը ենթակա է մերժման:

Նման դեպքում մասնակցի հայտը մերժման ենթակա է թե՞ ոչ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատ. գնումների գործընթացի կազակերպման բաժին
Հեռ՝ 011 800-114

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

_____ № _____

Ձեր № _____

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ուսումնասիրելով Ձեր 02/10/2017թ. թիվ 1/18-3/[1179629]-17 գրությունը /այսուհետ՝ Գրություն/՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանված է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսինքն պատվիրատուն մասնակցին հնարավորություն է տալիս շտկելու հայտով ներկայացված փաստաթղթերը, իսկ որևէ փաստաթղթի բացակայության դեպքում լրացուցիչ ներկայացնելու այն՝ բացառությամբ գնային առաջարկի և հայտի ապահովման:

Միաժամանակ նույն կարգի 42-րդ կետի համաձայն, եթե նշված 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոգրյալով պայմանավորված գտնում ենք, որ եթե Գրության մեջ նշված գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցը հայտով ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան կազմված գնային առաջարկ և հայտի ապահովում և այդ փաստաթղթերի մասով բացակայում է միայն վերջիններիս ստորագրման լիազորությունը մասնակցի ղեկավարի կողմից այլ անձի վերապահելու վերաբերյալ լիազորագիրը, ապա գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պետք է հնարավորություն ընձեռնվի այդ մասնակցին՝ հիշյալ լիազորագիրը ներկայացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258